ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ԿԱՊԿՈՒ սովորողի անհատական թղթապանակ

Կազմեց՝ Մարիաննա Բաղալյան Հովհաննեսի

«Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր»

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

«Կապանի N 2 ավագ դպրոց,, ՊՈԱԿ»

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԿԱՊԿՈՒ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹՂԹԱՊԱՆԱԿ.....5

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....15

ՀԱՎԵԼՎԱԾ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այսուհետև՝ ԿԱՊԿՈՒ) սովորողների լրացուցիչ կրթական ծրագրերին մասնակցելու իրավունքների իրացման, ինչպես նաև այդպիսի աշակերտների ծնողներին իրազեկելու և ներգրավելու գործընթացի ապահովումը ցանկացած զարգացող ու զարգացած երկրի պետական կրթական քաղաքականության կարևորագույն խնդիրներից է: ԿԱՊԿՈՒ սովորողների մասին օրենքը ՀՀ-ում ընդունվել է դեռևս 2001թ. մայիսին, լրացումներ և փոփոխություններ կատարվեցին 2014թ. դեկտեմբերին, իսկ սա նշանակում է՝ ՀՀ-ում շուրջ երկու տասնամյակ է համընդհանուր ներառման գործընթաց է, որը բխում է մարդուն ի ծնե տրված իրավունքներից: Հետևաբար ԿԱՊԿՈՒ սովորողը անպայման պետք է ունենա իր անհատական թղթապանակը, որի շնորհիվ էլ հեշտությամբ կարելի է տեսնել այդ կատեգորիայի սովորողի առաջընթացը կամ հետընթացը: Անհատական թղթապանակի օբյեկտիվ ու հանգամանալից կազմման, սովորողի ընդունակություններին համապատասխանող տվյալների լրացման և օրենքով սահմանված կարգով իրացման ընթացակարգը **արդիական** է մեր օրերի բոլոր տիպի հանրակրթական ուսումնական հաստատություններում արդյունավետ կրթություն և առողջ մտահորիզոնով քաղաքացի դաստիարակելու համար:

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրման նյութը ԿԱՊԿՈՒ սովորողի անհատական թղթապանակն է:

Թեմայի ուսումնասիրության նպատակն է հակիրճ ներկայացնել այն ամենը, ինչ ներառում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտի անհատական թղթապանակը, որը նմանատիպ երեխաներին ուսումնական գործընթացում ներառելու, նրա սոցիալիզացիային նպաստելու ամենակարևոր գործիքներից է, որով փաստորեն կարելի է օգնել ԿԱՊԿՈՒ երեխաներին՝ իրականացնելու իրենց կրթության իրավունքը դպրոցում:

Թեմայի նպատակից բխող խնդիրներն են՝

- Ներկայացնել՝ ինչ է «ԿԱՊԿՈՒ սովորող» արտահայտությունը,

- Կարևորել ԿԱՊԿՈՒ աշակերտի համար սահմանված նպատակները, որոնք ներկայացված են թղթապանակում,
- Ուսումնասիրել՝ ինչ հիմունքներով է կազմվում ԿԱՊԿՈՒ սովորողի անհատական թղթապանակը,
- Կատարել մասնագիտական գրականության և համապատասխան օրինական ակտերի հանգամանալից ուսումնասիրություն:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Թեմայի կիրառական նշանակությունը այն է, որ կատարված ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել մանկավարժների, սոցիալական մանկավարժների, ուսուցչի օգնականների, հոգեբանների մի շարք ուսումնասիրություններում՝ կապված ԿԱՊԿՈՒ երեխայի անհատականության ձևավորման և զարգացման վրա շրջապատող միջավայրի ունեցած ազդեցությունից:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, մեկ հիմնական գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից, աշխատանքին կցված է դասապլան պարունակող Հավելվածը: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 21 համակարգչային էջ:

ԿԱՊԿՈՒ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹՂԹԱՊԱՆԱԿ

Ներառական կրթության սոցիալական տեսանկյունը նույնքան կարևոր է, որքան ֆիզիկականն ու ակադեմիականը: Սոցիալական ներառումը և պատկանելության զգացումը, իհարկե, անկախ ամեն ինչից կարևոր են, բայց դրանք նաև սերտորեն կապված են դասապրոցեսին մասնակցության, ուսումնական առաջադիմության և հետագա աշխատանքային հաջողությունների հետ, որոնք որպես անհատ տվյալ աշակերտը տանելու է կյանքի այլ ոլորտներ:

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն[1]:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան ժամանակակից հասարակության համար նոր հասկացություն է: Այս տերմինի ի հայտ գալը վկայում է մեր հասարակության հասունացման մասին. այն դառնում է առերեսվել հատուկ կարիքներ ունեցող երեխայի հետ, լինի դա հաշմանդամություն ունեցող երեխա, թե պարզապես հայտնվել է կյանքի դժվարին իրավիճակում:

[1] Ներառական կրթություն, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2017: https://innostud.am/application/library/4b0d3123.pdf :

Յուրաքանչյուր երեխա և մեծահասակ յուրօրինակ և յուրահատուկ է յուրովի, և, հետևաբար, նրանցից յուրաքանչյուրն ունի իր անհատական կարիքները. ինչ-որ մեկը պետք է վիտամիններ ընդունի, ինչ-որ մեկը պետք է թաքնվի արևից ալերգիայի պատճառով կամ չուտի ելակ կամ քաղցրեղեն, ինչ-որ մեկին պետք է լռություն կենտրոնանալու համար, և ինչ-որ մեկին դասական երաժշտություն: Եթե նկատի ունենք կոնկրետ ներառական կրթությունը, ապա ճիշտ է ասել «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ»: Եվ սա, ի դեպ, միակ դեպքն է, երբ ճիշտ է «առանձնահատուկ» ասելը: Կարևոր է ընդգծել, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան մինչև 18 տարեկան անձն է, ով լրացուցիչ աջակցություն է պահանջում կրթական գործընթացում: Ո՞վ կարող է լինել.

- հաշմանդամություն ունեցող երեխաներ,
- կյանքի դժվարին պայմաններում գտնվող ընտանիքների երեխաներ,
- փողոցային երեխաներ,
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող երեխաներ,
- ծնողական խնամքից զրկված երեխաներ և այլք[2]:

Երեխան, որը հիվանդության կամ այլ պատճառներով ժամանակավորապես դուրս է մնացել ուսումնական գործընթացից, նույնպես դառնում է հատուկ կրթական կարիք ունեցող երեխա, քանի որ կարող է լրացուցիչ ժամանակ պահանջվել հասակակիցների հետ հասնելու համար: Առանձնահատուկ կարելի է համարել նաև այն երեխային, ով տաղանդավոր է և իր հատկանիշներով, գիտելիքի, իմացության մակարդակով տարբերվում է բոլորից:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունի «ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող այն անձը, սովորողը, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացվելու համար անհրաժեշտ են

[2] Ներառական կրթության ռազմավարություններ

https://www.unicef.org/armenia/media/3501/file/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf

կրթության առանձնահատուկ պայմաններ»: Կրթության առանձնահատուկ պայմաններն օրենքով սահմանվում են՝ որպես «հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն»[3],- նշված է ԿԱՊԿՈՒ սովորողի վերաբերյալ ՀՀ օրենքի Հոդված 3, կետ 10.15-ում:

Կարևոր է նաև նշել, որ ներառական կրթությունը չի վերաբերում միայն հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությանը. այն պետք է օգտակար լինի բոլոր երեխաներին և կենտրոնացած բոլորի կրթական կարիքների վրա՝ բոլոր սովորողների համար ապահովելով որակյալ կրթություն և սոցիալական ներառում, եթե նկատվում է աշակերտի մոտ շեղում համընդհանուր մակարդակից: Դասը դառնում է ներառական, երբ ուսուցիչը կարողանում է կազմակերպել երեխաների համատեղ գործունեությունը, առաջադրանքներ տալ բոլորին և տեսնել բոլորին: Կարևոր է նաև, որ ուսուցիչը իմանա, թե ինչպես է ընթանում զարգացումը, և ոչ միայն տիրապետի առարկայական նյութին: Դպրոցում մենք ոչ միայն գիտելիք ենք փոխանցում, այլև երեխային սովորեցնում ենք ճիշտ վերաբերվել իրեն, ուրիշներին ու աշխարհին:

Հաջող ընդգրկման համար անհրաժեշտ են յուրաքանչյուր դպրոց ունենա բազմամասնագիտական թիմ՝ հոգեբաններ, հատուկ մանկավարժներ, լոգոպեդներ. մարդիկ, ովքեր հասկանում են և գիտեն ԿԱՊԿՈՒ երեխայի զարգացման առանձնահատկությունները, կարող են կազմել հոգեբանական աջակցության ծրագիր և օգնել ուսուցչին գտնել ճիշտ մոտեցում աշակերտին դասավանդելու հարցում. Ուսուցիչների մոտ 90%-ը կարիք ունի մասնագետների աջակցության: Յուրաքանչյուր դպրոցում ուսուցիչների համար կարևոր է քննարկում ունենալ ԿԱՊԿՈՒ երեխաների մասին, կիսվել փորձով և սովորել միմյանցից:

[3] «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166

Մեր օրերում, փաստորեն, ԿԱՊԿՈՒ սովորողների սոցիալական ներառմանը նպաստելու մեծ պատասխանատվությունը միայն ընտանիքների վրա չպետք է դնել: Վճռականությունը, ստեղծագործական մոտեցումը և արդյունավետ պլանավորումը կարող են օգնել ԿԱՊԿ ունեցող երեխաներին և երիտասարդներին իրենց դպրոցներում և համայնքներում ստեղծելու և պահպանելու արժեքավոր սոցիալական հարաբերություններ՝ իրենց զգալով հոգեբանորեն ներառված ու ընդունված: Այդ նպատակին հասնելու համար ուսուցիչները, մասնագետները, հասակակիցները, ծնողները և իրենք՝ ԿԱՊԿ ունեցող աշակերտները պետք է գործադրեն միասնական ջանքեր: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բոլոր երեխաների լիարժեք ներառում ապահովող դասարանի, դպրոցական կամ համայնքային միջավայրի ստեղծումը կարող է մարտահրավերով հարուստ լինել: Արդյունքի կարելի է հասնել, եթե այս նպատակի համար միավորվեն աշակերտների, ուսուցիչների, մասնագետների, դպրոցների ղեկավարների և ծնողների ջանքերը: Կարևոր է վերաբերմունքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ներառման ընդլայնման նկատմամբ. եթե դրան վերաբերվում են որպես անհնարին գործի, ապա արդյունավետությունը խիստ նվազում է, իսկ եթե ներառումը համարվում է հաղթահարելի մարտահրավեր, շատ ավելի հավանական է, որ բոլոր մասնակիցները՝ հաշմանդամություն ունեցող և չունեցող աշակերտները, ընտանիքների անդամները և համայնքի ներկայացուցիչները հետաքրքրված լինեն ու ձգտեն հասնելու այս արդյունքին: Սխալ է ենթադրել, թե ֆիզիկական ներկայությունը կապահովի սոցիալական և/կամ հոգեբանական ներառում: Դպրոցները և ընտանիքները պետք է աշխատեն աշակերտների հետ, որպեսզի ստեղծեն մթնոլորտ, որտեղ առկա է փոխըմբռնումը, հարգանքը և դրական սոցիալական փոխգործակցությունը: Դպրոցները, որտեղ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներն իրենց զգում են սոցիալապես և հոգեբանորեն ներառված, բնորոշ է այնպիսի մթնոլորտ, որտեղ բազմազանության բոլոր տեսակները ոչ միայն ընդունվում են, այլև ողջունելի են:

Շատ հաճախ ենթադրվում է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտները չունեն, կամ առանձնապես չունեն ուժեղ կողմեր կամ շնորհներ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

աշակերտների անհատական կարողությունների բացահայտումը և ուրիշներին դրանց մասին տեղեկացնելը կարևոր է նրանց սոցիալական և հոգեբանական ներառման համար: Նման իրազեկումը ոչ միայն կարող է փոխել հասակակիցների վերաբերմունքը, այլև կարող է ծառայել որպես ներառմանը նպաստող գործոն:

Վերոնշյալ արդյունքներին հասնելու համար դպրոցում համապատասխան մասնագետները, որոնք աշխատում են ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ, պետք է ստեղծեն յուրաքանչյուրի **անհատական թղթապանակը**, որի ստեղծումը ստեղծագործական գործընթաց է, որը թույլ է տալիս ուսուցման ընթացքում հաշվի առնել ԿԱՊԿՈՒ աշակերտի ստացած արդյունքները տարբեր գործողություններում և տարբեր ժամանակահատվածներում: Անհատական թղթապանակը աշակերտի կրթական գործունեության արդյունքների գնահատման ժամանակակից արդյունավետ հնարք է:

ԿԱՊԿՈՒ երեխայի անհատական թղթապանակը ներառում է՝

- Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն ստացող յուրաքանչյուր երեխայի համար, նախքան աջակցության ծառայություն տրամադրելը, կազմվում է անհատական գործի թղթապանակ (այսուհետ՝ անհատական թղթապանակ), որը ներառում է երեխայի դպրոցական և տարածքային մակարդակների գնահատման արդյունքերի արձանագրությունը, ԱՈՒՊ-ը, ինչպես նաև վերջինիս կից փաստաթուղթ՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլան՝ ՄԱԾԱՊ, անձնական տվյալները, վկայագիրը, երեխային տրամադրվող ծառայությունների ժամանակացույցը, երեխայի զարգացման վերաբերյալ հավաքագրած և արձանագրած ցանկացած տեղեկատվություն և դրա հետ կապված այլ նյութեր (լուսանկար, տեսանյութեր, երեխայի աշխատանքներ և այլն):
- Երեխայի անհատական թղթապանակի պատասխանատուները համապատասխանաբար հաստատության տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով և տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալներն են:
- Երեխայի անհատական թղթապանակի և նրա անձնական կյանքի տվյալները գաղտնի են և չեն փոխանցվում երրորդ անձանց՝ առանց ծնողի գրավոր

համաձայնության: Տվյալների փոխանցումը երրորդ անձանց՝ առանց ծնողի համաձայնության, հնարավոր է միայն ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

Ըստ վերոնշյալ առաջին կետի՝ ԿԱՊԿ ունեցող աշակերտի անհատական թղթապանակի կարևորագույն բաղադրիչներից է դպրոցական մակարդակի գնահատումը: Եթե կրթության ցանկացած փուլում սովորողի մոտ նկատվում են կայուն դժվարություններ, որոնք խանգարում են նրան իր կարողությունների չափով մասնակցություն ունենալ ուսուցման և ուսումնառության գործընթացում, ապա ուսուցիչը, համաձայնեցնելով սովորողի ծնողի հետ, գրավոր դիմում է դպրոցի տնօրենին՝ իրականացնելու սովորողի դպրոցական մակարդակի Գնահատում: Դիմումը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում հաստատության տնօրենը հրաման է տալիս դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խմբին իրականացնել սովորողի դպրոցական մակարդակի գնահատում: Դպրոցական մակարդակի Գնահատումը սկսվում է դիտարկումով, որը տեղի է ունենում սովորողի բնականոն միջավայրում՝ դասապրոցեսի ընթացքում, դասամիջոցին, արտադասարանական կամ արտադպրոցական միջոցառումների ժամանակ:

Ուսուցիչը՝ որպես դիտարկում իրականացնող գլխավոր անձ՝ համագործակցելով դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խմբի, դասավանդող այլ ուսուցիչների և սովորողի ծնողների հետ, որոշակի ժամանակահատվածում, դիտարկման միջոցով, հավաքագրում է համապատասխան տեղեկատվություն սովորողի կարողությունների, հետաքրքրությունների, անձնային որակների, կարիքների ու դժվարությունների, հասակակիցների հետ փոխհարաբերությունների և այլնի մասին: Սովորողի հնարավորությունների, կարիքների և զարգացման առկա մակարդակի դիտարկումը շատ կարևոր է նրա հետագա ուսումնառությունը պլանավորելու և կազմակերպելու համար: Գնահատման այս փուլը, որը ներառում է սովորողի ուսուցիչների և այլ մանկավարժահոգեբանական աշխատողների դիտարկման արդյունքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը, տևում է 10-15 օր՝ ծնողի գրավոր դիմումի ընդունման օրվանից հաշված[4]:

[4] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113152

Դիտարկման արդյունքների հիման վրա լրացվում է «Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ը, իսկ արդյունքները արձանագրվում են «Դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկ» ձևաթղթում: Եթե սովորողի դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների վերլուծությունը չի վկայում սովորողի մոտ որևէ ֆունկցիայի խանգարման հավանականություն, ապա մանկավարժահոգեբանական աջակցության խումբը մշակում է «Կանխարգելիչ միջամտությունների պլան»՝ ծառայությունների տրամադրման և միջավայրային հարմարեցումների վերաբերյալ (դասավանդման մեթոդներ, տեղի և դասասենյակի վերադասավորումներ, ժամանակի կազմակերպում և այլն):

Այսպիսով, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման նպատակն է բացահայտել երեխայի մասնակցությունը և ակտիվությունը գործունեության բոլոր բնագավառներում, նրա ուժեղ և թույլ կողմերը, կրթության կազմակերպման համար անհրաժեշտ խթանող միջավայրը:

ԿԱՊԿՈՒ աշակերտի անհատական թղթապանակի հիմքը նախապես կազմված ԱՈՒՊ-ի արդյունք է և անընդհատ փոփոխվող մի փաստաթուղթ, որի իրականացումը աշակերտին կտանի դեպի իրական ներառում ու հարմարեցում միջավայրին: Թե ինչ խորությամբ է առանձին աշակերտը դիտարկվում որպես դժվարություններ ունեցող, կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով, որոնք էլ արտացոլվում են անհատական թղթապանակում: Հատկապես անհրաժեշտ է նշել, որ դպրոցի միջավայրը՝ կազմակերպվածությունը, կիրառվող մեթոդները, տիրող վերաբերմունքը, կարող է կենտրոնական դեր ունենալ աշակերտի անհատական որակները դժվարությունների վերագրելու հարցում:

Ի դեպ, ԱՈՒՊ-ը «…հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները(ներառյալ աջակցող ծառայությունները): Ընդ որում աջակցող ծառայությունները սովորողին տրամադրվում են դասերից հետո՝ ըստ որոշված ծավալի և տևողության, սակայն օրական 1,5 ժամից ոչ ավելի»[5]: ԱՈՒՊ-ը մշակվում է

[5] «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք

միայն այն երեխայի համար, ով ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և առանց անհրաժեշտ ծրագրային պարզեցումների և հարմարեցումների չի կարող հասնել իր կրթության նպատակներին[6]:

Կարևորն այն է, որ թղթապանակի դիտարկված ախտորոշումը, որն ընդգծում էր աշակերտի թերությունները, այլևս չի դիտարկվելու: Հիմնական մոտեցումը պետք է բխի այն գաղափարի ընդունումից, որ յուրաքանչյուր աշակերտ կարող է սովորել և ստեղծագործել: Դպրոցը պետք է պատասխանատվություն կրի ստեղծելու այնպիսի միջավայր, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա սովորել և ստեղծագործել: Դպրոցի միջավայրը պետք է միտված լինի զարգացնելու յուրաքանչյուր աշակերտի ներուժը և կարողությունները:

Կազմակերպվածությունն ու ռեսուրսների հատկացումը պետք է բավարար չափով ճկուն լինեն, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտ աջակցությունը տրամադրել անմիջապես դասարանում: Կրթության հետ կապված խնդիրները, որ աշակերտները կարող են ունենալ, պետք է շարունակաբար քննարկվեն դպրոցի մանկավարժների և հատուկ մանկավարժական աջակցության թիմի անդամների հետ համատեղ՝ ուշադրության կենտրոնում պահելով անհատական թղթապանակի գրանցումները, համապատասխան բաժնի փոփոխությունները: Դրա նպատակն է հնարավորինս վաղ կանխել հնարավոր խնդիրները՝ արագ առաջարկելով հնարավոր լուծումներ, իսկ ահա այս արդյունքի համար շատ կարևոր է հատուկ ուշադրություն դարձնել թղթապանակի բովանդակության և իրականության համապատասխանեցման վրա: Անհատական թղթապանակի դրական կողմերից բացի, որպես մանկավարժ, կարող ենք նշել այն կարևոր հանգամանքը, որ թղթապանակի բովանդակությունը հաճախ կրում է սուբյեկտիվ բնույթ, հետևաբար բովանդակության և իրականության համընկնումը հաճախ կարող է խաթարվել:

Երեխայի անհատական թղթապանակի բովանդակությունը կախված է տվյալ երեխայի համար առաջարկված ու նախատեսված ուսուցման կոնկրետ նպատակներից: Անհատական թղթապանակը կազմելիս ինչի՞ վրա հատկապես պիտի

https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166

[6] Թադևոսյան Ս. Անհատական ուսուցման պլանի մշակման,- մեթոդական ուղեցույց-ձեռնարկ, Երևան, 2016, էջ 41:

ուշադրություն դարձնեն մասնագետները: Առաջին հերթին, իհարկե, նման երեխաների կրթությունը պահանջում է որոշակի միջավայրի ստեղծում, որի տարրերն օգնում են լուծել նախ կենցաղային հարցերը, հետևաբար ակադեմիական գիտելիքների բարելավումից առավել պետք է ուշադրություն դարձնեն սոցիալական մոտիվին:

ԿԱՊԿՈՒ աշակերտի անհատական թղթապանակի մշակումը ենթադրում է մի շարք նպատակների իրականացում՝ հարմարեցված կրթության ժամանակակից բովանդակությանը, ինչպիսիք են՝

- Անհատական ուսուցում և մոտեցում,
- Կրթության անհատականացում,
- Անհատականացված ուսուցման տեխնոլոգիաների մշակում,
- Կենտրոնացում կոնկրետ նպատակների վրա,
- Ուսուցման անհատականացված հայեցակարգերի կիրառում,
- Անհատական հատկանիշների սիստեմատիկ բացահայտում և այլն:

Անհատական թղթապանակի իրական ու տվյալ երեխային համապատասխան տվյալներ ունենալու նպատակով մասնագետները, ովքեր աշխատում են երեխայի հետ, պետք է անպայման համագործակցեն կրթական գործընթացի բոլոր մասնակիցների՝ ծնողների, երեխաների, ուսուցիչների, համապատասխան այլ մասնագետների և հաստատության վարչական այլ աշխատողների հետ, կանխորոշել սեփական անելիքները և ասելիքները յուրաքանչյուր օղակի հետ՝ սովորողի կարիքներին համապատասխան արձագանքելու համար:

ԿԱՊԿՈՒ աշակերտի անհատական թղթապանակը մշակելիս անհրաժեշտ է հենվել որոշ սահմանված մակարդակների վրա, որոնք կարող են արտացոլել աշակերտի անհատական հատկանիշները, մասնավորապես.

- Հոգեֆիզիկական զարգացման մակարդակը,
- Մոտիվացիայի մակարդակը,
- Մտավոր զարգացման մակարդակը,
- Ընդհանուր գիտելիքների և մասնավորապես մշակվող ծրագրի բովանդակության վերաբերյալ իրազեկվածության մակարդակը,
- Իրավասությունների զարգացման մակարդակ,

- Առանձին գրագիտության՝ տեղեկատվական, ֆունկցիոնալ, լեզվական, ձևավորման մակարդակ՝ կախված մշակվող ծրագրի բովանդակությունից և թեմատիկ ուղղվածությունից:

ԿԱՊԿ ունեցող աշակերտի համար նախատեսված քայլաշարը դասաժամի համար նախատեսված օրվա դասապլանում անպայման պիտի լինի: Օրվա դասապլանի օրինակը տեսնել Հավելված բաժնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «ԿԱՊԿՈՒ սովորողի անհատական թղթապանակը» թեման և վերլուծելով թեմային համապատասխան գրականությունը, գիտական հոդվածները, ուսումնական ձեռնարկները, օրինական ակտերը՝ եկանք այն եզրակացության, որ երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում է աշակերտը, ընտանիքը, պետությունը, ի վերջո հասարակությունը: ԿԱՊԿ ունեցող սովորողների ներառումը հետապնդում է հենց այս նպատակը, իսկ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է տվյալ երեխայի հետ աշխատող թիմին ունենալ համակարգված ու օբյեկտիվորեն ստեղծված տվյալների բազա, որն էլ անվանում են ԿԱՊԿ ունեցող աշակերտի անհատական թղթապանակ: Անհատական թղթապանակը ներառում է սովորողի անձնական տվյալները, ծնողի համաձայնագիրը, վկայագիրը, դպրոցական կամ տարածքային մակարդակների գնահատման արդյունքները, ԱՈՒՊ-ը, ՄԱԾԱՊ-ը և այլն: Անհատական թղթապանակը կազմելիս մասնագետը պետք է անպայման զերծ մնա սուբյեկտիվ որևէ կարծիք արտահայտելուց կամ գրանցելուց: Ցանկացած դրական կամ բացասական փոփոխություն պետք է անպայման գրանցվի թղթապանակի համապատասխան բաժնում: Այս ամբողջ փաթեթը նպատակ ունի ապահովել ԿԱՊԿՈՒ սովորողի իրավունքները, նրան դարձնել հասարակության լիիրավ անդամ, կանխել սոցիալական մեկուսացումը, իսկ այս ամենի երաշխավորողը պետությունն է, իրականացնողը՝ մենք՝ ուսուցիչներս, մանկավարժահոգեբանական աջակցության աշխատակիցները: Փաթեթի պատասխանատուներն են ուսումնական հաստատության տնօրենը և ուսումնադաստիարակչական մասով փոխտնօրենը, իսկ փաթեթի պարունակության վերաբերյալ որևէ տեղեկության արտահոսք արգելվում է խստիվ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թադևոսյան Ս. Անհատական ուսուցման պլանի մշակման, մեթոդական ուղեցույց-ձեռնարկ, Երևան, 2016:
2. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166 :
3. Ներառական կրթության ռազմավարություններ https://www.unicef.org/armenia/media/3501/file/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf :
4. Ներառական կրթություն, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2017: https://innostud.am/application/library/4b0d3123.pdf :
5. http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113152

ՀԱՎԵԼՎԱԾ

Օրվա դասի պլան 11

Հովհ. Թումանյան , Ամենից լավ տունը /Դաս 2/

Առարկա	Մայրենի /հեղինակներ՝ Վ. Սարգսյան և ուրիշներ/
Ուսուցչուհի	Մարիաննա Բաղալյան
Դասարան	**3-րդ**
Աշակերտներ	8
Դասի մեթոդներ	«Հնգյակի մեթոդ», «Շարադրություն 10 րոպեում», «Երկու աստղիկ, մեկ դրոշակ», «Պրիզմա», «Մտագրոհ»
Թեմա	**Հովհ. Թումանյան , Ամենից լավ տունը /էջ 14/**
Նպատակ	Ձևավորել՝ • Ավելի լավ ճանաչել սեփական հայրենիքը, տունը, դրա հետ կապված պատմությունները • Ծանոթանալ ազգային արժեքներին, որը սկսվում է տնից, • Ինքնուրույն բնութագրել իրենց տունը
Ակնկալվող վերջնարդյունքներ	• Ճանաչել և սիրել իր հայրենիքը, տունը • Իմանալ ծննդավայրի կարևորությունը, որն է հայրենի տան տարբերակիչ առանձնահատկությունը այլ տներից • Կարողանա արտահայտիչ կարդալ և վերարտադրել մտքերը, կառուցի կապակցված խոսք։ • Ստանձնի տարբեր դերեր խմբային աշխատանքների քննարկումների ժամանակ։ • Պատմի դիտածը, ընթերցածը, արտահայտի սեփական զգացմունքները, ցանկությունները։

	• Իմանա տեքստում առկա բառերի հոմանիշներ, հականիշներ, ուղղագրությունը
Կապը ՀՊՉ-ով սահմանված վերջնարդյունքների հետ	1) ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվի գրական հայերենով, կարդա, հասկանա, վերարտադրի պարզ գեղարվեստական և տեղեկատվական տեքստեր, ձևակերպի տեքստի հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով). 8) դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին. 16) ճանաչի իր հայրենիքը, ներկայացնի տեղեկություններ 18) ճանաչի և հոգատար վերաբերմունք ցուցաբերի իր բնակավայրի և համայնքի բնության և պատմամշակութային ժառանգության օբյեկտների հանդեպ. 25) ճանաչի և համադրի տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, կիրառի դրանք աշխարհաճանաչողության գործում. 26) արտահայտի սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները, գիտակցի իր յուրահատուկ լինելը.
Խաչվող հասկացություններ	**Անհատներ և հարաբերություններ.** Ինքնաճանաչում, սեփական դերի գիտակցում, պարտականությունների ստանձնում և իրավունք ների իրացում: **Անհատական և մշակութային արժեհամակարգ**.

	Անհատ – հասարակություն փոխկախվածությունը, մարդու ստեղծած արժեքների ազդեցությունը: **Պատճառ -հետևանք** Անհատի որոշումները և դրանց հետևանքները նրա և միջավայրի վրա
Միջառարկայական կապեր	➢ **Հասարակագիտություն**- անհատի դերը իր տունը և հետևաբար սոցիալական միջավայրը գնահատելու և արժևորելու հարցում ➢ **կերպարվեստ**- դասագրքի և համացանցից վերցված նկարների դիտում , քննարկում, ինքնարտահայտում գույների միջոցով ➢ **Երաժշտություն**- թեմայի վերաբերյալ երգի ունկնդրում ➢ **Հայոց լեզու**- բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, քերականական անցած նյութի իմացություն ➢ **Տեխնոլոգիա**- թեմայի շրջանակում համապատասխան դեկորի ստացում, օրինակ, տուն՝ որպես Թումանյանի նկարագրած խրճիթը ➢ **Գրականություն**-ընթերցում, ունկնդրում
Առաջարկվող գործունեության ձևեր	• Դասագրքի նյութի ընթերցանություն, • սահիկաշարի կամ տեսանյութի դիտում , քննարկում • երևակայական ճանապարհորդություն դեպի երազանքների տուն • նկարի վերլուծություն • դերային (կերպարային) ուսուցում / ցանկալի է ԿԱՊԿՈՒ աշակերտի ներգրավվում կամ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցի կիրառում/

Անհրաժեշտ պարագաներ	Ուսումնական նյութեր, դասագիրք, համակարգիչ, նկարներ
Դասի ընթացքը	➢ Դասարանում նախապես կախվում է Թումանյանի և նրա հայրենական տան մեծադիր նկարը, որոնք դիտելուց հետո երեխաները պետք է իրենց խմբերում նկարեն իրենց տունը և համեմատեն Թումանյանի տան հետ: Երեխաները նախօրոք բաժանված և նստած են 3 խմբով՝ առաջինում 4 հոգի, երկու խմբում էլ՝ 5հոգի, **յուրաքանչյուր խմբում կա մեկական ԿԱՊԿՈՒ աշակերտ՝ Դաունի համախտանիշ, առուտիկ սպեկտրի խանգարում ունեցող/ առուտիկ, և թեթև մտավոր հետամնացություն ունեցող, որի նպատակն է ներառում և համամասնություն**: ➢ Ուսուցիչը նախապես կարդում է դասը՝ ներկայացնելով մարդկային կարոտը՝ ըստ բանաստեղծական տողերի, խոսում հայրենի տան ու կարոտի մասին: Հենց այդ ժամանակ էլ աշակերտների օգնությամբ փակցնում դասագրքի ասույթը. «Կարոտից է առաջ գալիս ամեն բարձր բան»: ➢ Կիրառվում է քարտային աշխատանք հնարը, յուրաքանչյուր աշակերտ կպչուն թղթերի վրա գրում է , թե ինչ կամ ում է հիմա կարոտում՝ փակցնելով ասույթի պաստառին / ԿԱՊԿՈՒ աշակերտը ըստ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման/ ➢ Կարդում են աշակերտները ուսուցչի նշած հատվածը, քննարկում, ԿԱՊԿՈՒ աշակերտներից ԴԱՈՒՆԻ համախտանիշով և առուտիզմ ունեցող աշակերտներին հանձնարարում են որևէ աշակերտից հետո կրկնել տողը, իսկ, օրինակ, թեթե մտավոր հետամնաց

	աշակերտը կարող է հարցերի միջոցով ներգարվել դասին: ➢ Օգտվել «2 աստղիկ և 1 դրոշակ» մեթոդից ➢ լրացնել«ԳՈՒՍ» աղյուսակը/ ԿԱՊԿՈՒ աշակերտը պարզապես կարող է գրել իր իմացած որևէ տառ/ ➢ Ունկնդրել Արաբո Իսպիրյանի «Տուն իմ հայրենի» նախապես ընտրված երգը ➢ Տնային աշխատանք- «Ամենից լավ տունը» շարադրություն կամ նկարեն իրենց տունը / ԿԱՊԿՈՒ աշակերտը ըստ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման՝ հիմք ընդունելով ԱՈՒՊ-ը:
Գնահատում	Կատարվում է միավորային գնահատում/ փոխադարձ գնահատում